

ԱՐՓԵՔԱՎՈՐ ՄԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Բազմավաստակ և անվանի պրոֆ. Լ. Մելիքսեթ-Քեկի մահվամբ մի պահ այնպես թվաց, թե առժամանակ ընդհատվելու է հայ-վրացական բանասիրական, աղբյուրագիտական կապերի հետազոտության խիստ անհրաժեշտ գործը: Երիտասարդ և խոստումնալից բանասեր Պ. Մուրադյանն իր երախայրիք հատորով եկավ ցրելու այդ մտավախությունը: Գրախոսվող մենագրության մեջ, ինչպես նաև հրատարակված բազմաթիվ հոդվածներով, նա երևան է բերում բանասերին անհրաժեշտ բազմակողմանի ընդունակություններ, գիտելիքներ և համառ աշխատասիրություն, որոնք միանգամայն բավարար են նրա ընտրած բնագավառում բարձրորակ հետազոտություններ կատարելու: Եվ դա սրտանց ուրախալի երևույթ է, որովհետև նման մասնագետների կարիքը գնալով մեծանում է:

Պ. Մուրադյանի հետազոտությունը՝ խորագրված «Հայ-վրացական մատենագրական փոխհարաբերությունները 18-րդ դարում» (ուրեք են լեզվով)¹, բաղկացած է 4 հիմնական գլուխներից:

Գեղարվեստական գրականություն (էջ 11—105)

Լեզվաբանական գրականություն (էջ 106—157)

Պատմություն, փիլիսոփայություն, իրավունք (էջ 158—193)

Հավելված՝ եկեղեցա-ծիսական գրականություն և բժշկական գրականություն (էջ 194—209):

Այն օժտված է ամփոփ առաջարկով, ինչպես նաև հատուկ անունների ու օգտագործված աղբյուրների ցանկերով:

Գեղարվեստական գրականության հետ կապված հարցերը քննվում են երկու խմբավորմամբ: ա) Չափածո, բ) Արձակ: Չափածոյի հետազոտությունը սկսվում է նաղաշ Հովնաթանի Թիֆլիսում ծավալած գրական գործունեությամբ: Պատշաճ ուշադրություն է նվիրված հատկապես Սայաթ-Նովային՝ որպես Թիֆլիսում ծնված ու գործած համակովկասյան անդուգական բանաստեղծի: Իրենց համեստ տեղն են գտել այդ բաժնում նաև Շամշի Մելքոն, Քիչիկ-Նովան և շատ ուրիշներ: Վերջիններիս թվում են վրացիացող մի քանի շնորհալի հայ երգիչներ՝ Թումանով-Թումանիշվիլիների տոհմից՝ Ավթանդիլը, Ստեփանն Փեղանգիշվիլին և այլք: Ուշագրավ է, որ Պ. Մուրադյանը հայտնի նյութերից բացի, երևան է բերել նաև ցարդ անտիպ ու անհայտ բանաստեղծություններ, որով նրա խոսքի թարմությունն ավելի է ուժեղացել: Այս առումով հետաքրքրական են Բուդաղ-Օղլանի, Քիչիկ-Նովայի նորահայտ երգերը՝ գրված վրացերեն և աղբյուրներեն, որը նույնպես նորույթ է:

Գեղարվեստական արձակին նվիրված էջերում քննված է հինգ երկ. Պղնձե քաղաքի պատմությունը, Մանկան և աղջկան պատմությունը, Խիկար իմաստունի խրատները, Աղվեսագիրքը և 'Գրիգոր Նարեկացու մի ներբողյանը՝ բոլորն էլ թարգմանված հայերենից վրացերեն: Ինչպես հայտնի է, դրանցից առաջին երեքը հայ մատենագրության մեջ ունեն թարգմանական ծագում, իսկ մյուս երկուսը՝ ազգային: Պ. Մուրադյանը հանգամանորեն քննելով առաջին երեք երկերի հետ կապված աղբյուրագիտական տվյալները, անառակելիորեն հաստատում է նրանց հայերենից վրացերեն թարգմանված լինելը: Հեղինակի ուշադրությունից չեն վրիպել նաև այդ երկերի տարբեր խմբագրությունները՝ իրենց հարուցած հարցերով: Այստեղ նրա հետազոտությունը, փաստերի ու մասնագիտական գրականության հարստության և բարդության պատճառով, ավելի քան գիտական բնույթ է ստանում: Ուշագրավ են այն համոզիչ առարկությունները, որոնցով նա հերքում է նախկինում եղած ոչ ճիշտ տեսակետներն ու կարծիքները: Նրա կովանները և՛ հարուստ ու հավաստի փաստերն են, և՛ առողջ տրամաբանությունը: Փաստահարուստ խոսք է ասված նաև Աղվեսագրքի թարգմանության կապակցությամբ: Այդ մասը, հիրավի, մի ամբողջական հետազոտություն է՝ հարցի բազմակողմանի ընդգրկումով: Գլուխն ավարտվում է Գրիգոր Նարեկացու երկերի որոշ մասի վրացերեն թարգմանված լինելու հարցի և նրա «Գումարք խմբից...» ներբողի պահպանված թարգմանության քննությամբ: Գնահատված է նաև թարգմանության բարձր արվեստը:

¹ П. М. Мурадян, Армяно-грузинские литературные взаимоотношения в XVIII веке, Ереван, 1966.

Որևորոգ գլխում՝ լեզվաբանական գրականություն խորագրի տակ քննված է նախ քերականական, ապա բառարանագրական գրականությունը: Քերականական գրականությանը նվիրված էջերում ցույց է տրվում, որ վրաց մատենագրության մեջ քերականական աշխատությունները երևան են գալիս 18-րդ դարից և հանդիսանում են նախ հայ քերականագիտական երկերի թարգմանություններ, ապա՝ եվրոպական աղբյուրների հիման վրա մշակված ու զարգացված նորորակ աշխատություններ: Ըստ որում, այդ թարգմանությունների և մշակումների մեջ էլ իրենց հատուկ տեղն են ունեցել այն մտավորականները (Ջաբարիա Մանդիլյան, Ջուրաբ Շանշոյան, Ավետիք վարդապետ, Փիլիպպոս Ղայթմազյան և այլք): Գրքում հանրամասնալից քննության են ենթարկված վրացերեն բոլոր կարևոր երկերը, ինչպես նաև նրանց հետ կապված բանասիրական հարցերը:

Բառարանագրությունը Վրաստանում նույնպես աճել ու զարգացել է եղբայրական հայ ժողովրդի դարավոր փորձի հիման վրա: Առաջին մեծարժեք երկի 18-րդ դարի հեղինակ Սուլխան-Սաբա Օրբելիանին նշում է, որ ինքը հետևել է հայկական մի համառոտ «Բառգրքի» և նրա նմանությամբ կաղմել իր երկը: Բառարանագրության հետագա զարգացման գործում մեծ մասնակցությունն են ունեցել հայ գրագետները: Փաստերն այստեղ էլ հարուստ են և պերճախոս: Շատ խնդիրներ, ինչպես նաև ձեռագիր աղբյուրներ քննվում են առաջին անգամ՝ արժանանալով ընդունելի մեկնաբանության:

Որևորոգ գլխում նախ ներկայացված են պատմական հուշարձանները՝ դրանք են՝ Ստեփաննոս Օրբելյանի պատմության մի գլուխը, Մ. Չամչյանի եռահատոր պատմությունը (կրճատումներով) և Հակոբ Շահամիրյանի «Անոր Տետրակ...»-ը՝ թարգմանված վրացերեն: Այստեղ տեղ է հատկացված նաև վրացական մի աղբյուրի, որի մեջ նկարագրված են Կարսը, Բայազետը և Նրևանը: Բայց դա արդեն քննվող հարցերի հետ առնչություն չունի և կարող էր դուրս թողնվել: Առանձին հետաքրքրություն են շարժում փիլիսոփայական ստեղծագործություններին վերաբերող փաստերը, տեղեկություններն ու նրանց հետազոտությունները: Այստեղ էլ, հիմնականում, գործ ունենք կամ հայերենից թարգմանված փիլիսոփայական երկերի հետ, կամ՝ հայ փիլիսոփաների գործունեության՝ Վրաստանում: Միայն Փիլիպպոս Ղայթմազյանի, Ջուրաբ Շանշոյանի շանքերով և նրանց վրացի աշակերտների մասնակցությամբ հայերենից թարգմանված փիլիսոփայական երկերի քանակը հասնում է 15-ի, շահված նրանց վերաթարգմանությունները (բոլորը միասին՝ 19 գործ):

Իրավացիորեն նշվում է, որ կարևոր դերը՝ վրացական փիլիսոփայական մտքի զարգացման գործում այդ ժամանակ խաղացել են 1755 թվականին Քիֆլիսում և 1758-ին Քելավում հիմնված կրոնա-փիլիսոփայական սեմինարները՝ Փիլիպպոս Ղայթմազյանի ղեկավարությամբ և վարդապետությամբ: Նրա մասին վրացի աշակերտները և մտավորականները մեծ ակնածանքով են խոսում: Իրավաբանական գրականությունից քննված է ժամանակի միակ երկը՝ Վախթանգ VI-ի Դատաստանագիրքը, որի մեջ հատուկ տեղ է տրված Մխիթար Գոշի Դատաստանագրքին: Զուգահեռաբար ուշադրություն է հրավիրված նրա թարգմանության անհրաժեշտության, ժամանակի և այլ հանգամանքների վրա:

Գրքի հավելվածում, առաջին հերթին, հետազոտված է եկեղեղա-ծիսակա գրականությունը՝ երեք խմբաբաժանմամբ. ա) Հայկական աղբյուրներ՝ օգտագործված վրացիների կողմից, բ) Հայերենից վրացերեն թարգմանված հայկական և օտար աղբյուրներ, գ) Հայկական գրականություն՝ վրացական տառերով և հայատառ վրացալեզու գրականություն: Ապա գալիս է Իժմիլիակա գրականությունը. հեղինակին հայտնի է երկու աղբյուր. մեկը՝ թարգմանված վրացերենից հայերեն, որը չպիտի քննվեր, որովհետև պատկանում է 17-րդ դարին (տե՛ս էջ 207), իսկ մյուսը՝ հայերենից վրացերեն: Վերջինս մեծարժեք հուշարձան է՝ ձեռքի և այլ անասունների բժշկության մասին, այն արաբերենից թարգմանվել է հայերեն ղեռն 953 թվականին, իսկ հայերենից վրացերեն՝ 1776 թվականին՝ Տեր Փիլիպպոսի, Տեր Սամվելի, Տեր Պետրոսի ձեռքով: Լեզուն ու ոճը մշակել է Իոհան Օսեսձեն:

Այսպիսին է մտավորապես Պ. Մուրադյանի «Հայ-վրացական մատենագրական փոխհարաբերությունները 18-րդ դարում» մենագրությունը: Դա, չիրավի, մեղվաջան ու բծախնդիր աշխատանքի արդյունք է՝ արժանի բարձր ղեռնատականի: Նրա հաջողությունը պայմանավորված է փաստերի հնարավորին չափ սպառիչ ընդգրկմամբ, մասնագիտական գրականության բավարար ծանոթությամբ, բանասիրական պատշաճ գիտելիքներով և անկողմնակալ ու կարող վերլուծություններով:

Ուշադրություն է գրավում առանձնապես այն պարագան, որ աշխատասիրողը ոչ միայն հմտորեն է տիրապետում և՛ հայերենին, և՛ վրացերենին, այլև կարողանում է պատշաճորեն օգտվել հին ձեռագրերից ու այլ սկզբնաղբյուրներից: Մենագրությունը նորություններ է բերում

հատկապես վրացերեն ձեռագրերի աշխարհից, որոնք քիչ էին ծանոթ կամ իսպառ ծանոթ չէին գեթ հայ բանասերներին:

Պիտի արձանագրել նաև, որ Պ. Մուրադյանը, հաճախ, կոնկրետ տվյալների բացակայության դեպքում, քննվող բնագրերի խմբագրությունների, նրանց հորինման կամ թարգմանության ժամանակների հետ կապվող հարցերը լուծելիս, կարողանում է ընդունելի եզրակացությունների հանգել՝ լեզվական հիմքի, առանձին դարձվածքների և նման այլ կովանների օգնությամբ:

Ընդհանուր առումով, նրա քրտնաջան աշխատանքի այս փաստահարուստ փաստակը մեծ նվեր է հայագետներին և վրացագետներին: Եվ եթե տեղ-տեղ նկատվում են առարկելի կետեր, առանձին թերություններ, ապա դրանք, հիմնականում գալիս են քննվող բնագավառում առկա դեռևս չհաղթահարված ընդհանուր դժվարություններից:

Այս առումով մենագրությունը մղում է մի քանի դիտողությունների:

Մեր կարծիքով իրեն չի արդարացնում աշխատասիրության խորագիրն ըստ իմաստի: Եղած փաստերը, առանց բացառության (չհաշված մի երկու անհարկի հարմարեցում), խոսում են ոչ թե հայ-վրացական «մատենագրական փոխհարաբերությունների» մասին, այլ՝ հայ մատենագրության Վրաստանում ունեցած դարգացման, տարածման և խաղացած դերի: Վերհիշենք բանաստեղծության բնագավառին վերաբերող փաստերը: Դրանք բոլորն էլ հայ հեղինակների գործեր են կամ առավել՝ վրացիացող հայերի, իսկ արձակի բաժնում քննված բոլոր երկերը՝ թարգմանություններ են հայերենից վրացերեն: Նույնը պիտի ասել քերականության, բառարանագրության, պատմության, մանավանդ փիլիսոփայության, իրավունքի, ծիսա-եկեղեցական և բժշկական գրականության մասին: Ինչպես կարելի է այս բացարձակապես միակողմանի երևույթը համարել «փոխհարաբերություն», երբ փոխարենը չկա:

Իսկ ինչու է այդպես: Դա մի ուշագրավ հարց է, որի պատասխանը թաքնված է հիմնականում երկու խոշոր իրադրության մեջ: Առաջինը, դա Վրաստանում գտնվող հայության հոծ զանգվածների դարավոր կյանքն ու կենցաղն էր: Պատմական դեպքերի բերումով, անցյալ ժամանակներում, Վրաստանին էին անցել հայկական ընդարձակ տարածություններ՝ իրենց բնակիչներով: Հիմնականում այդ հիմքի վրա հետագայում կուտակվում էին ներգաղթի նորանոր շերտեր: Եվ քանի որ վրացական եկեղեցին 7-րդ դարից դավանաբանական այլ ուղղություն էր ընդունել, ուստի հայության Վրաստանի զանգվածներն այս կամ այն շափով, աստիճանաբար, ներգրավվում էին դավանափոխության և ապաղգայնացման ջրապտույտի մեջ: Վրացիացած, կիսավրացիացած և անաղարտ մնացած հայության տարրեր օջախներում էր, որ ծնվեցին մատենագրության համապատասխան տարատեսակներ՝ լեզվի, գրի և թարգմանության առումով: Իրականում այդ հայության համար ծնված գրականության մեջ առկա էին և՛ մաքուր հայերեն, և՛ վրացատառ հայերեն, և՛ հայատառ վրացերեն, և՛ հայերենախառն վրացերեն ստեղծագործություններ, որոնք ո՛չ վրացիների համար և ո՛չ էլ նրանց պահանջով էր, որ հրապարակ էին եկել: Դրանք, ըստ ամենայնի, հայ դպրության արգասիքներ են՝ ծնված իրական կոնկրետ պայմանների մեջ, որոնց տերերը հայեր էին կամ աստիճանաբար վրացիացող հայեր: Այս երևույթն իր երկվորյակներն ուներ նաև հայ-թուրքական համատեղ կենցաղավարության համարյա բոլոր վայրերում և հայկական գաղթօջախներում առհասարակ:

Մասնագետների և ամենից առաջ հայագետների խնդիրն է հանգամանորեն վերադրել հայ ժողովրդի դասն ճակատագրով պայմանավորված այդ գրականությամբ, որի գաղտնիքը նրանց տերերի կյանքի անրնական, անազատ պայմաններն են: Ի այց նրանք, որպես կանոն, օտարանալով հանդերձ, կամա թե ակամա համառել են՝ կախ մնալով մայրենիի փեշերից: Դրա փայլուն վկաններն են հայատառ օտարալեզու կամ օտարատառ հայալեզու հուշարձաններին՝ իրենց տարատեսակներով:

Նրկրորդ խոշոր իրողությունն այն էր, որ 18-րդ դարում պատմա-քաղաքական համեմատաբար նպաստավոր պայմանների պատճառով, վրաց մտավորականությունը, ուստի և մատենագրությունը թևակոխել էր զարգացման մի նոր, աննախընթաց շրջան: Եվ որովհետև այդ ժամանակ հոգևոր հարստացման համար մատչելի ու հարուստ հյուսիս կային նաև դարավոր դրկից հայ ժողովրդի կերտած հնամենի ու ճոխ մշակույթի մեջ, բնականաբար, ժամանակի առաջավոր մտածողները, առաջին հերթին, օգտվում էին այդ հնարավորությունից: Դա նախընտրելի էր նաև այն պարզ պատճառով, որ այդտեղ առկա էին պատրաստի, հմուտ թարգմանիչներ, կարող մտավորականներ, որոնք լինելով հայ, ապրելով Վրաստանում, քաջապես տիրապետում էին նաև վրացերենին: Դա արդեն վրացիների համար և վրացիների պահանջով ստեղծվող մատենագրություն էր, որն այլ գնահատություն է պահանջում: Եվ եթե այսօր ոմանք փորձում են շրջանցել այս իրողությունը, ապա այն ժամանակ այդպես չէին մտածում: Եվ, ինչպես ցույց է տրված մենագրու-

թյան մեջ, վրաց թագավորներն ու թագաժառանգներն իրենք էին որոնում Փիլիպպոս Ղայթմազյաններին, Ավետիք վարդապետներին և նմաններին՝ նրանց հանձնարարելով ժամանակի կրթության ու թարգմանության համապատասխան բնագավառների ծանր ու լուսավորող գործը:

Այսպես մոտենալով խնդրին, կարող ենք ասել, որ Պ. Մուրադյանի քննարկած 18-րդ դարի մատենագրական նյութերը բաժանվում են երեք խմբի. ա) Վրաստանում ապրող հայության ստեղծած մատենագրություն, բ) Հայ դպրության օգնությամբ զարգացած վրացական մատենագրություն, գ) Հայերենից վրացերեն թարգմանված գրականություն: Ըստ այդմ էլ, ահա պիտի մշակվեն աշխատության ընդհանուր խորագիրը, ձգտելով համապատասխանել նշված իրողությանը և ոչ թե «Մատենագրական փոխհարաբերություններ» կաղապարին:

Ինքը, Պ. Մուրադյանն էլ, աշխատանքի ընթացքում, ինչպես երևում է, նեղվել է խորագրի այդ արհեստականությունից, որովհետև մի երկու անգամ ուրախացած բացականչում է, թե ահա այստեղ գործ ունենք «փոխադարձ», «երկկողմանի» հարաբերությունների հետ: Դրանք էլ, սակայն կամ լիարժեք փաստեր չեն կամ չեն պատկանում 18-րդ դարին: Պ. Մուրադյանի գրքում առկա այս ոչ ճիշտ մոտեցումը մասամբ պայմանավորված է նման դեպքերում նախընտրելի համարված «փոխադարձ կապեր», «փոխհարաբերություններ» հասկացությունների չափից ավելի շարաշահումով, ապա նաև պատմական իրադրությունների անբավարար լուսարանմամբ: Եթե նախապես հետազոտված լինեք «Հայերը Վրաստանում» մեծագույն հարցը, ապա խնդիրը համեմատաբար ավելի պարզ կլիներ: Ինքը, Պ. Մուրադյանն էլ քիչ է հոգացել այդ ուղղությամբ, ուստի և նրա մոտ հեշտությամբ է Դավիթ Կյուրապաղատը (10-րդ դ.) առանց վերապահության, հայտարարվում է Տայքի վրացական (վրացի) թագավոր («по приказу грузинского царя Тайка Давида Курапалата», էջ 53): Մինչդեռ իրականում նա վրացադավան հայ էր՝ սերած հայ Բագրատունիներից: Եվ եթե այդպիսի անձինք ժամանակին համարվել են նաև վրացի (կամ հոռոմ, ազվան), ապա դա ոչ թե նրանց ազգային, այլ դավանաբանական պատկանելիության պատճառով: Ասենք նաև, որ Պ. Մուրադյանի այդ անճիշտ արտահայտությունը յուրովի, կարծես, միտում է տարածվել նաև Տայքի վրա, մանավանդ, երբ հեղինակը գրում է. «Мало вероятно, чтобы Давид Курапалат поручил перевести это произведение только на армянский язык» (էջ 50): Բայց ինչու՞ չհավատալ իրողությանը, չէ՞ որ առկա միակ համապատասխան փաստը վկայում է, որ Դավիթ Կյուրապաղատի համար արաբերենից ընտրված պատմությունները թարգմանվել են հայերեն. իրականում էլ նրանք պահպանվել են միայն հայերեն:

Նկատելի են նաև այսպես կոչված մանր վրիպումներ, շտկման և ճշգրտման կարոտ դարձվածքներ, տվյալներ, հայտարարություններ: Օրինակ, հեղինակը քանիցս նշում է, որ Թիֆլիսի հայ աշուղների քնարերգությունը դեռևս ուսումնասիրված չէ (էջ 17) կամ բոլորովին հետազոտված չէ (էջ 29), մինչդեռ այդ ուղղությամբ ցարդ մեծ աշխատանք է կատարված: Այլ բան է ասել, թե այն դեռևս ամբողջապես ու պատշաճորեն քննված և հրատարակված չէ: Գրիգոր Նարեկացու «Գումարք խմբից» ներբողին հաջորդող «Գերագանց չափոյ...» հատվածը ոչ թե առանձին ներբող է (էջ 101), այլ նախորդի օրգանական մասը՝ հեղինակի անունը («Գրիգոր») ծայրակապով հաղորդելու համար: Տիրայր վարդապետը (էջ 46), իրոք, կազմել է Պղնձե քաղաքի գիտական բնագիրը, որը գտնվում է Դաշտոցյան Մատենադարանի արխիվում (անտիպ): Ոչ թե Գյուրջի նովա, այլ Գյուրջի նավե (էջ 29): Ոչ թե Նիրան (անդ), այլ Նիրանի: Ոչ թե Աղամ Ամզար (անդ), այլ Աղամ Աղբար և այլն:

Ինչպես հեղինակն է նշում, նա հավակնություն չի ունեցել կարծելու, թե իրեն հաջողվել է սպառել ողջ նյութը: Այս առումով կարելի է ուշադրություն հրավիրել դեռևս անհայտ մի բանաստեղծի վրա, որը եղել է նաև նկարիչ, ապրել է Թիֆլիսում և նաղաշ Հովնաթանի թոռան՝ Հովնաթան Հովնաթանյանի հետ միասին մասնակցել էջմիածնի վանքի նորոգման աշխատանքներին: Նրա անունն է նաղաշ Աղեքսանդր. որի մի բանաստեղծությունը պահպանվում է Մաշտոցի անվան Մատենադարանում: Կարելի էր սպասել, որ իր մենագրության մեջ Պ. Մուրադյանը փոքր ինչ ծանրանար նաև նաղաշ Հովնաթանի որդու՝ նաղաշ Հակոբի վրա, որը Թիֆլիսում ապրելով և ստեղծագործելով, իր երգերի մեջ իրեն երբեմն կոչում է նաև «Գյուրջի» Հակոբ: Հնարավորություն կար խոսելու Սերովրե Պատկանյանի 1790-ական թվականներին Թիֆլիսում ապրած կյանքի և խաղացած դերի մասին և այլն:

Այս թերություններով հանդերձ, սեղանի վրա է մի մեծարժեք մենագրություն՝ լի հարուստ փաստերով, հանգամանալից վերլուծություններով և բանասիրական ճոխ տեղեկություններով: Առանց նրա չի կարելի պատկերացնել ժամանակին Վրաստանում ապրող հայության հոծ զանգվածների մտավոր առօրյան՝ իր բազմակողմանիությամբ: Նույնը պիտի ասել նաև հայ մատենա-

գրության այն բարերար դերի մասին, որ խաղացել է այդ ժամանակ վրաց իրականության մեջ, նրանք, ովքեր գրադվում են հայկական և վրացական դեղարվեստական գրականության, քերականագիտության, քառարանագրության, փիլիսոփայության, պատմության, իրավաբանության, բժշկության հարցերով, մանավանդ նաղաշ Հովնաթանի, Հովնաթանյան դպրոցի և Սայաթ-Նովայի անմահ ժառանգությամբ, շեն կարող շրջանցել այդ գիրքը: Այստեղ է, որ առաջին անգամ ամբողջական ու բարեխիղճ խոսք է ասվում քննվող մատենագրության մասին:

Երախտագետ սանն իր մենագրությունը ձոնել է խոշոր վրացագետ ակադ. Կ. Ս. Կեկելիձեի հիշատակին, որը եղել է նրա ասպիրանտական ուսումնառության ու քննվող մենագրության ղեկավարը:

Գրքի խմբագիրն է ակադեմիկոս Ս. Յ. Երեմյանո:

ԱՍ. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ